ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ 2025–2030 ԹԹ.

Ներածություն

Առաքելություն

Դառնալ տարածաշրջանում մրցունակ, միջազգային չափանիշներին համապատասխանող ստոմատոլոգիական ֆակուլտետ, որն կապահովի ստոմատոլոգիայի ոլորտում ՀՀ կրթության որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների (ՀՀ ՈԱՇ, ՈՈՇ) համապատասխան, միջազգային մակարդակի մրցունակ մասնագետների պատրաստում՝ հիմնված գիտական նորարարությունների, հետազոտությունների և որակի ապահովման վրա:

Տեսլական

Պատրաստել մասնագիտական, բարոյական բարձր արժեքներով, ապացուցողական բժշկության սկզբունքներին տիրապետող, նորարարական մտածողությամբ և միջազգային աշխատաշուկայում մրցունակ ստոմատոլոգներ՝ նպաստելով հանրային առողջության զարգացմանը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Նպատակ՝ Տրամադրել ժամանակակից կրթական միջավայր, որն ապահովում է ստոմատոլոգիական ոլորտի միջազգային չափանիշներին համապատասխան մասնագետների պատրաստման բարձր որակ:

Խնդիրներ՝

- Դասընթացների և կրթական ծրագրերի վերանայում և արդիականացում՝ հիմնվելով արդյունքահեն կրթության (Outcome-Based Education) սկզբունքների վրա:
- Համապատասխանեցնել ուսումնական պլանները միջազգային չափանիշներին:
- Ուսուցման և գնահատման մեթոդների կատարելագործում:
- Կրթական ծրագրի մշտադիտարկման, բարելավման և պլանավորման գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավում:
- Ներդնել ինտեգրված և միջառարկայական ուսուցում:
- Ընդլայնել ընտրովի առարկաների ցանկը:
- Թվայնացնել ուսումնական գործընթացը:

Գնահատման ցուցանիշներ՝

- Մինև 14 միջազգային առաջատար համալսարանների ծրագրերի վերլուծություն:
- Նոր ուսումնական պլանի կազմում:
- Կրթական ծրագրերի արդիականացում:

- Մասնագիտական դասընթացներում գործնական բաղադրիչի չափաքանակի ավելացում՝ մինչև 50%:
- Էլեկտրոնային ուսումնական նյութերի ամբողջական բազայի և նորացված գրադարանի առկայություն:
- Ուսանողների բավարարվածության ավելացում՝ ≥90%:

2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նպատակ՝ Բարձրացնել գիտական ակտիվությունը և ինտեգրվել միջազգային գիտական հանրությանը:
Խնդիրներ՝

- Գիտահետազոտական կարիքների, անհրաժեշտ ռեսուրսների գնահատում:
- Առարկայական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ներդրման բարելավում:
- Համագործակցության զարգացում առաջատար բժշկական համալսարանների և հետազոտական ինստիտուտների հետ:
- Արտոնագրային աշխատանքների և գիտական հրապարակումների քանակի աճ:
- Ամբիոնների կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների մասնակցության ավելացում:
- Գիտական հրապարակումների թվի ավելացում:

Գնահատման ցուցանիշներ՝
- Տարեկան ≥20 միջազգային հոդվածների տպագրում:
- Scopus/Web of Science հրապարակումների ավելացում:
- Միջազգային գիտաժողովների կազմակերպում:
- Մուլտիդիսցիպլինար հրապարակումների ավելացում:

3. ՆՈՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԹՎԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

Նպատակ՝ Ներդնել նորագույն կրթական տեխնոլոգիաներ՝ ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով:

Խնդիրներ՝
- Էլեկտրոնային համալսարանի ամբողջական գործարկում
- Թվային հարթակների (վիրտուալ լաբորատորիաներ, թվային ստոմատոլոգիայի ուսուցում) կիրառություն:
- Միջազգային էլեկտրոնային գրադարանների բաժանորդագրության ընդլայնում:
- Կրթական բովանդակության և տվյալների բազաների թվայնացման խթանում:
- Արհեստական բանականության կիրառման նախապատրաստում:
- Թվային գրագիտության ծրագրեր դասախոսների և ուսանողների համար:

Գնահատման ցուցանիշներ՝

- Սիմուլյացիոն կենտրոնների ավելացում:
- CAD/CAM լաբորատորիայի ստեղծում:
- 3D տպագրության տեխնոլոգիաների կիրառում:
- Թվային ռենտգեն (թիրախային, օրթոպանտոմոգրամա, համակչգչային տոմոգրաֆիա), ներբերանային սկաներների տեսախցիկների, թվային ախտորոշման այլ մեթոդների օգտագործում:
- Մասնագիտական կլինիկաների աշխատանքը կառավարող ծրագրերի կիրառում:

4. ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նպատակ՝ Ապահովել դասախոսական կազմի զարգացում և երիտասարդ մասնագետների ներգրավում:

Խնդիրներ՝

- Դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի գնահատում: Ըստ ամբիոնների և դասընթացների, համալրման և փոխարինման առաջնահերթությունների բացահայտում
- Միջազգային դրամաշնորհային ծրագրերում պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնակցության բարելավում
- Դասախոսների որակավորման բարձրացում՝ շարունակական մասնագիտական զարգացում, մանկավարժական վերապատրաստումներ, թվային հմտությունների զարգացում:
- Երիտասարդ մասնագետների հավաքագրումը, անհրաժեշտ բեռնվածքով ապահովումն ու մասնագիտական առաջընթացը խթանելու համար նպաստավոր պայմանների ստեղծում:
- Ոլորտի առաջատար մասնագետների գրավում, որպես հյուր դասախոսներ:
- Ակադեմիական շարժունության խթանում:
- Դասախոսների օտար լեզուների/ անգլերենի/ տիրապետումը և այդ լեզվով դասավանդումը խրախուսող միջոցների կիրառում:

Գնահատման ցուցանիշներ՝

- Դասախոսների ≥50 %-ի տարեկան վերապատրաստում:
- Միջազգային վերապատրաստումների մասնակցության աճ:
- Դասավանդման նոր մեթոդների ներդրում:
- Անգլերեն լեզվի իմացությունը հավաստող փաստաթուղթ ունեցող դասախոսների քանակի ավելացում մինչև 80%:

5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Նպատակ՝ Զարգացնել միջազգային կապերը:
Խնդիրներ՝

- Միջազգային բենչմարքինգի միջոցով կրթության և գիտության ոլորտներում միջազգային փորձի տեղայնացում:
- Օտարերկրյա ուսանողների թվի ավելացում:
- Համագործակցություն միջազգային մասնագիտական ասոցիացիաների հետ:
- Ակադեմիական շարժունության խթանում:
- Համագործակցության հուշագրերի ստորագրում:

Գնահատման ցուցանիշներ՝

- ≥10 միջազգային գործընկեր համալսարանների հետ համագործակցություն:
- Erasmus+, Horizon Europe և այլ ծրագրերի մասնակցություն
- Տարեկան առնվազն 5 փոխանակման ուսանող
- Անգլերենով անցկացվող դասընթաց

6. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Նպատակ՝ Իրականացնել ուսանողների պրակտիկ փորձի կատարելագործում
Խնդիրներ՝

- Համագործակցություն ստոմատոլոգիական ոլորտի առաջատարների հետ:
- Ոսումնական պրակտիկայի կազմակերպում սիմուլիացիոն կենտրոններում և կլինիկաններում:

Գնահատման ցուցանիշներ
Վարժասարքերի քանակի ավելացում ≥200:
Վարժասարքերի վրա իրականացվող գործողութանների ավելացում ≥40 %:
Ուսումնական բազա հանդիսացող կլինիկաների ավելացում ≥30:
Կլինիկաներում գործնական հմտությունների ավելացում ≥10%:

7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Նպատակ՝ Ապահովել կրթական, գիտական և վարչական գործընթացների բարձր որակը՝ համապատասխան միջազգային չափանիշներին և շարունակական բարելավման սկզբունքներին:

Խնդիրներ՝

- Որակի ներքին գնահատման համակարգի զարգացում:
- Դասախոսների գործունեության տարեկան գնահատում:
- Ուսանողների հետադարձ կապի մշտական համակարգի առկայություն:

- Արտաքին հավատարմագրման, մոնիթորինգի գործընթացների հաջող իրականացում:
- Ներքին և արտաքին շահակիցների հետ կանոնավոր հետադարձ կապի ապահովում՝ կրթական գործընթացի կատարելագործման նպատակով:
- «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրի պարբերական մոնիթորինգի և վերանայման աշխատանքների կազմակերպում:
- Կրթության որակի ապահովման վերաբերյալ հաշվետվողականության ապահովում:

Գնահատման ցուցանիշներ՝

- ISO կամ համարժեք որակի կառավարման սկզբունքների ներդրում:
- Տարեկան որակի հաշվետվություն:
- Բարելավման գործողությունների իրականացում ≥90%:

8. ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Նպատակ՝ Իրականացնել հանրային առողջությանը և համայնքային ծառայությանն ուղղված միջոցառումներ:

Խնդիրներ

- Կանխարգելիչ ծրագրերի անցկացում դպրոցներում:
- Անվճար ստոմատոլոգիական զննումների իրականացում:
- Հանրային իրազեկման ծրագրերի անցկացում:

Ցուցանիշներ

- Տարեկան ≥1000 բնակիչների զննում:
- ≥20 կրթական միջոցառումների անցկացում:
- Համայնքային ծրագրերի տարեկան աճ

ԿԱՏԱՐՄԱՆ ՓՈՒԼԵՐ

Առաջին տարի

- Ռազմավարական պլանավորում:
- Կրթական ծրագրերի գնահատում:
- Նոր ուսումնական պլանի ներդնում:
- Նոր ուսումնական ծրագրերի ներդրում:
- Որակի ապահովման համակարգի կատարելագործում

Երկրորդ տարի

- Նոր ուսումնական ծրագրերի վերանայում:
- Սիմուլյացիոն կենտրոնի բարելավում:
- Արտաքին ակրեդիտացիայի նախապատրաստում:

Երրորդ տարի

- Հետազոտական աշխատանքների ավելացում:

- Թվային ստոմատոլոգիայի ներդրում:
- Միջազգային համագործակցության ընդլայնում:

Չորրորդ տարի

- Միջազգային ճանաչելիության բարձրացում:
- Գիտական հրապարակումների զգալի աճ:
- Անգլալեզու ծրագրերի իրականացում:

Հինգերորդ տարի

- Արտաքին գնահատում:
- Ռազմավարության արդյունքների վերլուծություն:
- Նոր 5-ամյա զարգացման ծրագրի մշակում:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ

Ծրագիրը մշակված է՝ հաշվի առնելով հետևյալ միջազգային ուղղորդող փաստաթղթերի և լավագույն փորձի սկզբունքները.

- ՀՀ կրթության որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների (ՀՀ ՈԱՇ, ՈՈՇ) սկզբունքները:
- Եվրոպական բարձրագույն կրթության սկզբունքները (ADEE):
- Արդյունքահեն կրթության (Outcome-Based Education, OBE) մոտեցումը:
- Ուսանողակենտրոն ուսուցման սկզբունքները:
- Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներն ու ուղեցույցները:
- Բժշկական և ստոմատոլոգիական կրթության միջազգային հավատարմագրման լավագույն փորձը:
- Ապացուցողական բժշկության և թվային ստոմատոլոգիայի ժամանակակից պահանջները: